«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

ՄԻՆՉԵՎ ՕՐՍ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԸՆԹԵՐՑՈՂՆ ԵՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Առանձնապես դուր են գալիս այն հոդվածները, որոնք պատմում են մեր Ախալքալաքիի շրջանի տնտեսությունների, մեր մարդկանց մասին:

Թերթի հոբելյանական այս օրերին շատ է ասվել «Վրաստանի» նշանակության ու դերի մասին: Այդ կապակցությամբ ես կցանկայի առանձնացնել մի կարեւոր հանգամանք. սկսած խորհրդային տարիներից մեր ախալքալաքցիների «աքիլլեսյան գարշապարը» պետական լեզվին լավ չտիրապետելն էր: Բարեբախտաբար, ներկայիս սերնդի ախալքալաքցիների մոտ այդ խնդիրը կարելի է համարել լուծված, գրեթե բոլորը ոչ միայն վարժ խոսում են վրացերեն, այլեւ սովորում են Վրաստանի տարբեր բուհերում: Եվ այդ հարցում, պետական լեզվի ժողովրդականացման հարցում արտակարգ մեծ է «Վրաստանի» դերը: Նույնիսկ պետական լեզվի ուսուցման, անկեղծ ասած կիսատ-պռատ ծրագրերի ժամանակ էլ թերթը համառորեն գործում էր վրացերենի ուսուցման անհրաժեշտության քարոզչության ուղղությամբ:

Եվ, ընդհանրապես՝ որպես թերթի հավատարիմ ընթերցող, հարկ եմ համարում նշել, որ «Վրաստանը» միշտ հավատարմորեն ծառայել է վրացական պետության կառուցման, երկրի ազգությամբ հայ քաղաքացիների՝ վրաց հասարակությանը լիարժեք ինտեգրման շնորհակալ գործին: Եվ այդ հավատարմության արդյունքում «Վրաստանն» արժանիորեն տեղ է զբաղեցնում Վրաստանի այն լրատվամիջոցների շարքում, որոնք, անկախ քաղաքական ելեւէջումներից, չեն շեղվել իրենց ընտրած ճանապարհից՝ միշտ հավատարիմ մնալով իրենց առաքելությանը:

Շնորհավոր տոնդ, «Վրաստան», երկարակեցություն եւ ընթերցողների բազմություն եմ մաղթում:

ԳԱՅՈՂ ԼՈՄՍԱՁԵ

Ախալքալաքիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի փոխնախագահ

ԲԱՐԻ ՀԱՄԲԱՎԻ ՈՒ ՃԱՆԱՉՄԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՀՈԲԵԼՅԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տարիքը, հետաքրքրությունները, նախասիրությունները եւ այլն: «Վրաստան» թերթը միշտ ապահովել է իր ընթերցողների հետաքրքրությունները եւ հնարավորություն տվել, որ նրանք ծանոթանան հետաքրքիր ու ակտուալ թեմաներով հոդվածների, եւ հենց այդ պատճառով էլ միշտ սիրված ու պահանջված է եղել: Ասեմ ավելին, սիրված ու պահանջված է եղել 100 տարվա ընթացքում, եւ ժամանակը ոչ մի կերպ չի կարողացել իր ազդեցությունը թողնել թերթի վրա: Ուզում եմ սրտանց շնորհավորել «Վրաստան» թերթի 100-ամյա փառավոր հոբելյանը եւ մաղթել բազում հաջողություններ ու մեծ վերելք:

ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ախալցիխե

ԿՐԹԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ Է 2 ՄԻԼԻԱՐԴ ԼԱՐԻՆ

Վրաստանի ֆինանսների նախարարության տարածած լրատվության համաձայն, հաջորդ տարվա բյուջեի նախագծի վերջնական տարբերակում կրթության եւ գիտության ֆինանսավորմանը հատկացվել է 2 մլրդ 121 մլն լարի, որից ավելի քան 380 մլն-ը կհատկացվի նախադպրոցական կրթությանը:

- Հանրակրթության ֆինանսավորումը կազմում է 390 մլն լարի (մոտ 125 մլն դոլար): Հատկացված գումարի շրջանակներում նախատեսվում է հանրակրթական դպրոցներում կարգավիճակ ունեցող ուսուցիչների հավելավճարի ավելացում 100 լարիով (մոտ 33 դոլար), հանրակրթական դպրոցի վարչական անձնակազմի աշխատավարձերի 10 տոկոս բարձրացում: Դպրոցի վերահսկողական ծառայության աշխատողների աշխատավարձերի բարձրացում 100 լարիով,- ասված է հաղորդագրության մեջ:

Նշվում է, որ դպրոցների վերականգնման եւ վերանորոգման աշխատանքների համար հատկացված է 190,8 մլն լարի (մոտ 60,8 մլն դոլար), բյուջեի նախորդ տարբերակի համեմատ, այս ուղղությամբ լրացուցիչ հատկացվել է 30 մլն լարի:

Ըստ նախարարության տվյալների, մասնագիտական կրթության ֆինանսավորման համար հատկացվել է 119 մլն լարի (մոտ 38,1 մլն դոլար), այդ թվում՝ ավելի քան 46 մլն լարի (մոտ 14,7 մլն դոլար)՝ մասնագիտական ուսումնարանների կառուցման եւ վերականգնման համար: Բարձրագույն կրթության եւ գիտության ֆինանսավորումը կազմում է 232 մլն լարի (մոտ 74,3 մլն դոլար):

ՁՄԵՌԱՅԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԸ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի՝Ց ՄԻՆՉԵՎ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ը

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը, Վրաստանի դպրոցներում 2021-2022 ուսումնական տարվա ձմեռային արձակուրդները կմեկնարկեն դեկտեմբերի 30-ից եւ կշարունակվեն մինչեւ հունվարի 17-ը:

Տեղեկատվության մեջ նշված է, որ 2021 թվականի վերջին ուսումնական օրը կլինի դեկտեմբերի 29-ը:

Նշենք, որ դպրոցներում ուսումնական գործընթացի մեկնարկի եւ սեզոնային արձակուրդների ժամանակացույցը սահմանվում է նախարարի հատուկ հրամանով, ըստ որի, ձմեռային արձակուրդները կտեւեն դեկտեմբերի 30-ից մինչեւ հունվարի 15-ը: Եվ քանի որ 2022-ի հունվարի 15-16-ը շաբաթ եւ կիրակի օրեր են, ուսումնական գործընթացը կվերսկսվի հունվարի 17-ին՝ երկուշաբթի:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔ, ՈՐ ԱՊՐՈՒՄ ՈՒ ՇԵՆԱՑՆՈՒՄ Է ՀԱՅՐԵՆԻ ԿԱՐՏԻԿԱՄԸ

«Ինչպես որ քաղցր են ծնողները, այնպես էլ քաղցր է ծննդավայրը»

Մ.ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻ

Լրացավ վաստակավոր ուսուցչուհի Չինար Ստեփանի Երանոսյան-Էլիզբարյանի ծննդյան 70 եւ մանկավարժական գործունեության 50-ամյակը: Մանկավարժ, ով երբեք չի հոգնել ազգանվեր, հայրենանվեր աշխատանքից, եւ այսօր էլ շարունակում է հայեցի ակտիվ գործունեություն:

Մանկավարժ ասելը քիչ է նման նվիրյալների պարագայում. ամենից առաջ մեծատառով մարդ՝ ընտանիքում, հասարակական միջավայրում, աշխատանքում... Այո', բառիս բուն իմաստով ազգապահպան մի զինվոր, որ դժվարություններից երբեք չի ընկճվել:

Հարգարժան ուսուցչուհին մեծ բարերար է իր դասերով, հեղինակային բազում միջոցառումներով, խելամիտ խորհուրդներով, համարձակությամբ, ճշտապահությամբ ու հոգատարությամբ:

Չինարը ծնվել է Ախալքալաքիի շրջանի Կարտիկամ գյուղում՝ ապուպապերով կիրթ, ուսյալ ու բարեգործ ընտանիքում, ուր աշխատանքը եղել է պաշտամունք, ազգասիրություն...

1966-ին ավարտել է գյուղի 8-ամյա, ապա՝ 1968-ին հարեւան՝ Կուլիկամի միջնակարգ դպրոցը՝ գերազանց գնահատականներով: Նույն թվին էլ ընդունվել է Երեւանի Ակ.Բակունցի անվան մանկավարժական ուսումնարանի դպրոցական բաժինը: Մանկուց երազել էր դառնալ մանկավարժ եւ աշխատել հայրենի գյուղի դպրոցում: 1971-ից աշխատանքի է անցել գյուղի արդեն միջնակարգ դպրոցում՝ որպես տարրական դասարանների ուսուցչուհի: Ուսուցչուհի դառնալու երազանքն իրականացավ, բայց ուսման ծարավն այս անգամ նրան տարավ բուհ: 1976-ին ընդունվեց Կիրովականի (Վանաձոր) մանկավարժական ինստիտուտի հայոց լեզու եւ գրականության բաժինը եւ այն նորից գերազանցությամբ ավարտեց 1981-ին: Չինարը մանկուց զբաղվել է նաեւ սպորտով, դպրոցական տարիներից մասնակցել է բազում մրցույթների. 1967, 1968 եւ 1970-ին դարձել Վրաստանի եւ Հայաստանի թեթեւ ատլետիկայի (2 կմ վազք) մրցանակակիր:

Ուսուցչուհու մանկավարժական եւ հասարակական ակտիվ գործունեությունը բարձր են գնահատել ու գնահատում սաները, ծնողներն ու դպրոցի ղեկավարները: Ազգանվեր գործունեության համար արժանացել է Վրաստանի եւ Հայաստանի բազում պատվոգրերի ու կոչումների:

1987-ին ուսուցչուհին ընտրվել է Վրաստանի ուսուցիչների 6-րդ համագումարի պատգամավոր: Նրան շնորհվել է ՎՀ վաստակավորի կոչում եւ «ԽՍՀՄ գերազանցիկ» մեդալ, սակայն նա երբեւէ չի հպարտացել ու բարձրաձայնել այդ մասին: Նրա համար «ուսուցիչ» կոչումն ամեն ինչ է, իսկ պաշտոնի երբեք չի ձգտել: Ավելացնեմ՝ Աղասի Էլիզբարյանի եւ Չինար Երանոսյանի ընտանիքը եւս օրինակելիի դաս է նրանց ճանաչողների համար:

Վերակառուցում անվան տակ ստեղծված խառնաշփոթի տարիներին դպրոցը լքեցին շատերը, սակայն գյուղում մնացին նվիրյալներն ու արժանապատվորեն պահպանեցին դպրոց ու դաս... Նորից իր անկաշառ ու ազգանվեր էությամբ մայրենիի նվիրյալը իր ուսուցիչների ընտանիքով ոչ մի օր չլքեց դպրոց ու դասաժամ...

1995-ից Չինարը նշանակվեց տնօրեն:

Դպրոցը ծաղկում ապրեց. նրա ղեկավարած մանկավարժական կոլեկտիվի հայրենանվեր աշխատանքը տվեց մեծ արդյունքը: Դպրոցի սաներն արժանացան մրցանակային բազում պատվոգրերի, մեդալների, Օլիմպիական չեմպիոններ դարձան: Ամեն տարի դպրոցի 10-12 շրջանավարտ ընդունվում են տարբեր բուհեր:

2011-ից Չինարին փոխարինեց ավագ որդին՝ Արարատը, պատմության եւ իրավագիտության մասնագիտությունը լրացրեց Ժվանիայի անվան բարձրագույն դպրոցում: Արժանացել է մեթոդիստ, ավագ, Վրաստանի եւ Հայաստանի լավագույն տնօրեն մեդալ-պատվոգրի, բազում նախագծերի հեղինակ է: Նրա շնորհիվ դպրոցի եռահարկ շենքը վերանորոգվեց եւ ապահովվեց ժամանակակից բոլոր պայմաններով:

Կրտսեր որդին՝ Ատոմը, ՎՀ վաստակավոր մարզիչ է, Վրաստանի եւ Հայաստանի ոսկե մեդալի եւ պատվոգրի արժանացած, Ախալքալաքի մարզահամալիրի տնօրենը: Նրա բազմաթիվ սաներ արժանացել են Օլիմպիական չեմպիոնի կոչման:

Իրենց ազգանվեր գործունեութամբ հարգված մանկավարժներ են նաեւ հարսները՝ Նինան ու Էլմիրան: Նրանք եւս հաղթահարել են որակավորման նորմերը եւ ստացել Ավագ ուսուցչի կոչում:

Չինարի թոռները՝ Աղասին, Արգիշտին, Արշակը եւ Արտաշեսը, եւս կանգնած են ազգանվեր գործունեության ճանապարհին...

Ուսուցիչների օրինակելի այս ընտանիքը մեծ աշխատանք է կատարում հայերեն եւ վրացերեն թերթերի ու ամսագրերի բաժանորդագրման գործում:

Նրանց ջանքերով բացվել է գյուղի պատմության թանգարան, հավաքագրվել ու հավաքվում է փաստագրական տեղեկություններ, նմուշներ, լուսանկարներ, ինչպես նաեւ աշխատանք է տարվում լույս ընծայելու «Կարտիկամ» հուշագիրքը:

Մենք ուրախ ենք, որ Ջավախեթիի մասին ակնարկող տեղեկագրերում բարձր գնահատականի են արժանանում հարգարժան ուսուցչուհին եւ նրա ընտանիքի անդամները:

Վերջերս ազգանվեր գործունեության համար «Արեւիկ» հիմնադրամի կողմից եւս Չինարն արժանացավ «Հայապահպան» պատվոգրի:

Ցանկանում ենք շարունակելի կենսագրություն Ջավախքն ամուր պահող նման գերդաստաններին...

Կարտիկամի հանրային դպրոցի մանկավարժներ, ծնողներ, շրջանավարտներ, ընկերներ

COVID - 19. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂՐԵԼԻՋԵ. «ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ԵՆՔ ՎԱՐԱԿԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱԼԻՔԻ ԳԱԳԱԹՆԱԿԵՏԸ, ՇՆՉԱՌԱԿԱՆ ՎԻՐՈՒՍՆԵՐՆ ԱԿՏԻՎԱՆՈՒՄ ԵՆ»

«ՕՄԻԿՐՈՆ» ՇՏԱՄԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԴԵՌԵՎ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՉԻ ԳՐԱՆՑՎԵԼ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Առայժմ «Օմիկրոն» նոր շտամը Վրաստանում չի հաստատվել, եւ այս բոլոր գործոնները միասին նպաստում են կայունացման դանդաղ տեմպերին: Բայց դա հանդարտվելու առիթ չէ, քանի որ թվերը դեռ բարձր են: Նոյեմբերին մենք անցել ենք հինգերորդ ալիքի պիկ շրջանը: Հիմա ձմեռային շրջան է, շնչառական վիրուսներն ակտիվացել են, եւ մենք կարող ենք ազատորեն աճի միտում ունենալ, եթե չհետեւենք այն հանձնարարականներին, որոնց մասին խոսում ենք: Երկրում պաշտպանիչ դիմակ կրելու ցուցանիշը կրկին ցածր է,- ասաց Ամիրան Գամղրելիձեն եւ հավելեց, որ մահացությունը չի նվազի այնքան ժամանակ, քանի դեռ նոր դեպքերի թիվն ամեն օր չի իջել 1000-ից:

- Ամանորը մեզ համար ամենամեծ տոներից է: Մաղթում եմ բոլորին 2022 թվականին համաճարակն ավարտել, բայց այնուամենայնիվ մենք բոլորս պետք է փորձենք հնարավորինս համեստ լինել այս տոնին,- նշեց Ամիրան Գամղրելիձեն:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ 273 ՄԻԼԻՈՆԸ

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում հասել է 273 260 317-ի: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 5 353 600-ը: Ապաքինվել է 245 398 183 մարդ:

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ կա հաստատված **51 435 652** դեպք: Այստեղ մահացածների թիվը **824 520** է, երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **34 726 049**-ի, մահացածներինը՝ **476 869**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **22 204 941**, մահացել՝ **617 521** մարդ: **Մեծ Բրիտանիայում** կորոնավիրուսով վարակվել է **11 097 851**, վարակի հետեւանքով մահացել՝ **146 937** մարդ: Մեծ Բրիտանիային հաջորդում են Ռուսաստանը, Թուրքիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իրանը ու Իսպանիան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **343 157**-ի, մահացածներինը՝ **7 874**-ի, ապաքինվածներինը՝ **327 029**-ի:

Ադրբեջանում վարակվածների թիվը **608 060** է: Վարակից մահացել է **8 149,** ապաքինվել՝ **582 243** մարդ:

Վրաստանում, վերջին տվյալներով, վարակվել է **904 181,** մահացել՝ **12 971**, ապաքինվել՝ **852 560** մարդ:

*Դեկտեմբերի 17-ին կորոնավիրուսով վարակման **2 979** նոր դեպքերից **1 325**-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 229, Իմերեթիում՝ 493, Քվեմո Քարթլիում՝ 135, Շիդա Քարթլիում՝ 207, Գուրիայում՝ 109, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 184, Կախեթիում՝ 137, Մցխեթա-Մթիանեթիում՝ 81, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 20, Սամցխե-Ջավախեթիում՝ 59:*

Դեկտեմբերի 17-ի տվյալներով մահացել է 53 մարդ:

ՎԱԹՍՈՒՆՆ ԱՆՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ, ՈՒԶՈՒՄ ԵՔ ՍՏԱՆԱԼ 200 ԼԱՐԻ ՆՎԵՐ, ՈՒՐԵՄՆ, ՄԻՆՉԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ը ՊԱՏՎԱՍՏՎԵՔ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ԱՌԱՋԻՆ ԴԵՂԱՉԱՓՈՎ ԵՎ ՍՏԱՑԵՔ 200 ԼԱՐԻ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ. ԴԻՄԵՔ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԿԵՏԵՐ, ԻՍԿ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵՔ 1522 ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐԻՆ ԿԱՄ ԱՅՑԵԼԵՔ BOOKING.MOH.GOV.GE ԿԱՅՔ

«Georgia e-health»-Ի ՀԱՎԵԼՎԱԾՆ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ Է ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ 25 ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

«CovidPass Georgia»-Ն ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ Է ՄԻԱՅՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Երբ մարդը գրանցվում է Georgia e-health-ում, նա կարող է օգտագործել այս հավելվածը Եվրամիության, այնպես էլ՝ 25 այլ երկրներում, որտեղ գործում է այս միասնական համակարգը:

Ինչպես հայտարարեց միջգերատեսչական համակարգող խորհրդի օպերատիվ շտաբի ղեկավար Գիորգի Ղիբրաձեն, Արդարադատության տանը տպագրված Covid-19 քարտը վավեր է, որը փոխարինում է Georgia e-health-ին եւ դրա տպագիր ձեւն է:

- Եվս մեկ անգամ պարզաբանեմ՝ երկրում կա երկու հավելված, որոնք տարբեր նպատակներ ունեն: Առաջին հավելվածը Georgia e-health-ն է, եւ, ինչպես հայտնի է, այս հավելվածը կցված է Եվրամիության ընդհանուր տարածքին: Երբ անձը գրանցվում է Georgia e-health-ում, նա կարող է օգտագործել այս հավելվածը ԵՄ-ում, գումարած 25 երկրներում, որտեղ գործում է այս միասնական համակարգը: Իհարկե, Georgia e-health-ը գործում է Վրաստանում, եւ ցանկացած անձ, ով ունի այս հավելվածը, սովորաբար այն կօգտագործի իր կանաչ կարգավիճակը ստուգելու եւ հաստատելու համար: Հասկանալի է նաեւ, որ Արդարադատության տանը տպված Covid-19 քարտը վավեր է, որն ինքնին փոխարինում է Georgia e-health հավելվածին, եւ սա դրա տպագիր ձեւն է,- ասաց Գիորգի Ղիբրաձեն եւ հավելեց, որ CovidPass Georgia-ն օգտագործվում է միայն Վրաստանում:

- Ինչ վերաբերում է CovidPass Georgia-ին, այն օգտագործվում է միայն Վրաստանում եւ ունի երկու նպատակ՝ առաջինը, որպեսզի մենք ստուգենք մեր կարգավիճակը եւ տեսնենք, երկրորդը՝ ներկառուցված սկաներ, որն օգտագործում է հավելվածը՝ պարզելու մարդու կանաչ կարգավիճակը: Ինչ վերաբերում է գրանցմանը, ապա գրանցումը շատ պարզ է, այն բաղկացած է ընդամենը մի քանի կետից: Իհարկե, կան թերություններ, կային խնդիրներ, որոնք շտկվում են: Գրանցումը շատ պարզ է: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գործարար մարդկանց, ովքեր հարմարեցրել են այս հավելվածը եւ բավական արդյունավետ են օգտագործում այն: Այս հավելվածը կիրառելի է նաեւ, եթե արտերկրից ես մուտք գործել Վրաստան եւ Եվրամիության ընդհանուր տարածքի անդամ չես: Որոշ տեխնիկական խնդիրներ կային: Սա կապված էր տարբեր ասպեկտների հետ, ինչպիսիք են տվյալների բազայում բեռնման հետաձգումը, ինչպես նաեւ տվյալների բազա մուտքագրված սխալ տվյալները: Դրա համար տեղեկատվական արշավ է սկսվել: Տեղեկատվությունը տեղադրված է նաեւ կայքերում, այդ թվում՝ Պրովաքսի եւ առողջապահության նախարարության կայքերում, ինչպես նաեւ գործում է թեժ գիծ՝ այս խնդիրների լուծման համար:

Նրանք, ովքեր հավելված չունեն, կարող են օգտվել Վրաստանում տպագրված ցանկացած փաստաթղթից, որն ունի QR կամ շտրիխ կոդ,- ասել է Գիորգի Ղիբրաձեն:

Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՀՈԲԵԼՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՏԻԿՆՈՋ՝ ՕԼԳԱ ՄԱՃԿԱԼՅԱՆԻ 150-ԱՄՅԱԿՆ ԻՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԿԻ ՏԱԿ

Դեկտեմբերի 12-ին, Վիրահայոց թեմի «Հովհաննես Թումանյանի տուն» գիտա-մշակութային կենտրոնում նշվեց Հովհաննես Թումանյանի տիկնոջ՝ Օլգա Մաճկալյանի 150-ամյակը:

Երեկոն նախաձեռնել էին «Թումանյանի տուն» կենտրոնը եւ Վրաստանի հայ կանանց «Շուշանիկ» միությունը:

Սահմանված կարգավորումների պատճառով, դահլիճում հավաքվածների թիվը փոքրաթիվ էր, ներկա էին միայն պատվաստում անցած անձինք: Միջոցառումը վարեցին Գիսանե Հովսեփյանը, Սուսաննա Խաչատրյանը եւ Գոհար Մազմանյանը:

Միջոցառման խորհուրդը յուրահատուկ էր՝ պահպանելով Թումանյան ընտանիքի ջերմությունը, սերն ու հյուրընկալությունը:

Դահլիճը յուրահատուկ շքեղություն էր ստացել, Օլգա մայրիկի հիշատակին այն զարդարվել էր տարբեր ընտանիքներում նախնիներից պահպանվող հազվագյուտ իրերով, որոնք հիշեցնում էին անցած ժամանակների կոլորիտային մթնոլորտը՝ ասեղնագործ նմուշներ, հազվագյուտ հովանոց, սպասք, դրամապանակ, գլխաշոր եւ նման այլ իրեր: Երախտիքի խոսքեր ուղղվեցին Դավթյան, Զոհրաբյան, Աղեկյան, Աբովյան, Ութմազյան, Երեմյան ընտանիքներին հազվագյուտ իրերը ներկայացնելու համար:

Միջոցառման ընթացքում տեսակապով միացան Թումանյանի թոռնուհին՝ Իրմա Սաֆրազբեկյանը՝ Գերմանիայից եւ Երեւանի Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանի տնօրեն Անի Եղիազարյանը: Տիկին Իրման, խոսելով իր տատիկ-պապիկի մասին, հիշեց այս պատմական տուն իր այցելությունների, տատիկի հետ իր անմոռաց մտերմության ու հոգատարության մասին: Տիկին Իրման ցույց տվեց կերակուրների պատրաստման բաղադրատոմսերի գրքույկը, որի վրա պահպանվում է Օլգա մայրիկի մատների ջերմությունը: Իսկ Ալյոնա Կալեսնիկովան՝ Թումանյանի ծոռնուհին, խոսեց այն գորովալից սիրո մասին, որ Օլգա տատիկը տածում էր թոռներից ամեն մեկի նկատմամբ:

Ներկաները իրենց ելույթներում արժեւորեցին միջոցառման յուրահատկությունը, հիշեցին իրենց ընտանիքներում հաստատված ավանդույթները եւ իրենց խոնարհումը բերեցին Օլգա Մաճկալյանի հիշատակին:

Ամփոփելով միջոցառումը՝ գնահատանքի իր խոսքում Թբիլիսիի Սուրբ Գեւորգ եկեղեցու հոգեւոր հովիվ Վիրապ քահանա Ղազարյանը փոխանցեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի օրհնությունը:

Միջոցառումը գեղեցկացրին Սուրբ Գեւորգ եկեղեցական երգչախմբի ղեկավար Սվետլանա Տատոեւայի եւ նրա սաների դասական կատարումները: Ուշագրավ էր միջոցառման հյուր՝ Թբիլիսիի բժշկական համալսարանի ռեզիդենտ, նեյրովիրաբույժ Սամուել Օդեդոկունի դասական երգերի գեղեցիկ կատարումը:

ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի՞Ց ԱՎԵԼԱՑՎՈՒՄ ԵՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՍՏՆԵՐԸ

Դեկտեմբերի 16-ին Հայաստանի կառավարության նիստում ընդունվեց որոշում, ըստ որի, 2022 թվականի հունվարի 1-ից կենսաթոշակների ու նպաստների չափը կավելանա:

Հաջորդ տարվա հունվարի 1-ից նվազագույն կենսաթոշակի չափը կսահմանվի 28 600 դրամ՝ 26 500 դրամի փոխարեն: Կավելանան նաեւ պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողների հաշմանդամության, զինվորական կենսաթոշակների չափերը:

Առաջին խմբի հաշմանդամություն ունեցող անձի համար կսահմանվի 43 հազար դրամ, 40 հազարի փոխարեն, 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցողի համար՝ 33 հազար դրամ, 30 հազար դրամի փոխարեն, եւ երրորդ խմբի հաշմանդամություն ունեցողի համար՝ 30 հազար դրամ, 27 հազար դրամի փոխարեն:

Ծերության, հաշմանդամության եւ կերակրողին կորցնելու դեպքում, նպաստների չափերը կսահմանվեն 28 600 դրամ, 26 500 դրամի փոխարեն, իսկ հաշմանդամ երեխա ճանաչված անձի համար՝ 37 հազար դրամ, 26 500 դրամի փոխարեն:

Մինչեւ երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը նույնպես կբարձրանա՝ դառնալով 28 հազար 600 դրամ, 26 հազար 600 դրամի փոխարեն:

ՀԱՍՏԱՏՎԵՑ «ՏԱՐՎԱ 10 ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐ» ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ՀԻՄՆԱԳՐԱՄԸ

Հայաստանի կառավարության՝ դեկտեմբերի 16-ին կայացած նիստում որոշում է կայացվել լրացուցիչ 45 մլն դրամ հատկացնել «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթի հաղթողների պարգեւատրման համար:

Քանի որ նախատեսվում է պարգեւատրել 2021 թվականի 10 լավագույն մարզիկներին, ուստի անհրաժեշտություն է առաջացել միջոցառմանը տրամադրել 45 մլն դրամ: Անհրաժեշտ գումարը կտրամադրվի 2021 թվականի պետական բյուջեով Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությանը նախատեսված ընդհանուր հատկացումների հաշվին:

Նշվեց, որ այս տարի դրամական պարգեւներ կստանան ոչ միայն տարվա 10 լավագույն մարզիկները, այլեւ նրանց անչնական մարզիչները, հավաքականների գլխավոր մարզիչները, բժիշկները, իսկ թիմերից, որոնք չեն ունենա բժիշկներ, պարգեւներ կստանան մերսողները, ինչն անանախադեպ երեւույթ է: 2021թ. «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթի շրջանակում դեկտեմբերի 9-ից մեկնարկել է «Հանդիսատեսի համակրանք» անվանակարգ մրցույթի SMS քվեարկության փուլը: Այն կանցկացվի մինչեւ դեկտեմբերի 19-ը:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՏՎԱՍՏՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ՄՈՏԵՆՈՒՄ Է ՄԵԿՈՒԿԵՍ ՄԻԼԻՈՆԻ

Հայաստանում, դեկտեմբերի 12-ի դրությամբ, կատարվել է կորոնավիրուսի դեմ 1 միլիոն 452 հազար 374 պատվաստում: Հայաստանի առողջապահության նախարարության տեղեկատվությամբ, պատվաստումների ընդհանուր թվից առաջին դեղաչափը 869 հազար 750-ն է, երկրորդ դեղաչափը՝ 582 հազար 624-ը:

8 ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄ՝ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայաստանի կառավարությունը 8 միլիարդ դրամ կտրամադրի կորոնավիրուսի դեմ պայքարի համար իրականացվող ծրագրերի ֆինանսավորման համար:

Հայաստանի էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի խոսքով, կորոնավիրուսի դեմ պայքարի առաջին միջոցառման համար հատկացնում են 2 միլիարդ 146 միլիոն դրամ:

Այս ծրագրով 1 052 ընկերության օգնել են ստանալ 87 մլրդ դրամի արտոնյալ վարկեր, որոնք ուղղված են եղել հումքի, սարքավորումների ձեռքբերմանը: Ֆինանսական միջոցներ կտրամադրվեն գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի պետական աջակցության ծրագրի: Ծրագրով այս տարվա ընթացքում գյուղացիներին 456 գյուղատնտեսական տեխնիկայով են ապահովել, որի համար հատկացվել է 2.7 մլրդ դրամի ֆինանսավորում:

22 756 ֆերմերային տնտեսություն ստացել է 45 միլիարդ դրամի գյուղատնտեսական արտոնյալ վարկ, որոնք օգտագործել են գյուղատնտեսական աշխատանքներն իրականացնելու համար: Ֆինանսավորվել է մոտ 700 հա ինտենսիվ այգի եւ նոր, ավելի բարձր արտադրողականությամբ խաղողի այգիներ: Այս տարի արտահանվել է ռեկորդային թվով առաջնային գյուղմթերք՝ գերազանցվել է 200 հազար տոննայի նշագիծը:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԵՎ ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎԸ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ՀԱՆԴԻՊԵՑԻՆ ՇԱՌԼ ՄԻՇԵԼԻՆ ՈՒ ԷՄԱՆՈՒԵԼ ՄԱԿՐՈՆԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Քննարկվեցին 2020 թվականի նոյեմբերի 9-ի, 2021 թվականի հունվարի 11-ի, ինչպես նաեւ նոյեմբերի 26-ի եռակողմ հայտարարությունների կատարման ընթացքը:

Կողմերը վերահաստատեցին երկաթուղու վերագործարկման պայմանավորվածությունը: Ըստ այդմ, երկաթուղին կգործի սահմանային եւ մաքսային միջազգայնորեն ընդունված կանոնների համաձայն՝ փոխադարձության սկզբունքով, երկրների ինքնիշխանության ու իրավազորության ներքո: Հայաստանը երկաթուղով հասանելիություն կստանա դեպի Իրան եւ Ռուսաստան: Կարեւորվել է տարածաշրջանում լարվածության նվազեցման ուղղությամբ կոնկրետ քայլերի ձեռնարկումը:

Անդրադարձ է կատարվել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ դեմարկացիայի եւ դելիմիտացիայի իրականացման, ինչպես նաեւ փոխվստահության հաստատմանը միտված հնարավոր քայլերին:

Կողմերը պայմանավորվել են շարունակել շփումները:

Նշենք, որ դեկտեմբերի 16-ին, Բրյուսելում Արեւելյան գործընկերության գագաթաժողովի ավարտին, տեղի է ունեցել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի եռակողմ հանդիպումը:

Ֆրանսիայի նախագահի նախաձեռնությամբ կայացած հանդիպմանը Մակրոնը մասնավորապես նշել է.

- Մենք երբեք չենք լքի հայերին: Մենք մշտապես կփնտրենք լուծումներ տեւական խաղաղության համար: Հորդորում եմ, որ տոնական այս շրջանը դառնա մարդասիրական առաջընթացի ու հաշտեցման շրջան:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԾ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՆ

Դեկտեմբերի 16-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Բրյուսելում Արեւելյան գործընկերության մասնակից պետությունների՝ Վրաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի եւ Ադրբեջանի, ինչպես նաեւ Եվրամիության անդամ երկրների ղեկավարների հետ, մասնակցեց Արեւելյան գործընկերության 6-րդ գագաթաժողովին:

Մինչ լիագումար նիստի մեկնարկը կայացավ գագաթաժողովի մասնակիցների տեսալուսանկարահանման արարողությունը՝ Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի, Եվրամիության հանձնաժողովի նախագահ Ուրսուլա Ֆոն դեր Լայենի եւ ԵՄ-ում նախագահող Սլովենիայի վարչապետ Յանեզ Յանշայի հետ:

Նիկոլ Փաշինյանն իր խոսքում անդրադարձավ Արեւելյան գործընկերության շրջանակում Եվրոպական միության հետ համագործակցությանը, մեր երկրում իրականացվող ինստիտուցիոնալ բարեփոխումներին եւ ժողովրդավարության ամրապնդման քայլերին, փոքր եւ միջին բիզնեսի, ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին, ինչպես նաեւ Հարավային Կովկասի տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումներին:

Արեւելյան գործընկերության 6-րդ գագաթաժողովը հիմնականում կենտրոնացավ առանցքային հինգ ոլորտների՝ տնտեսության, կառավարման, շրջակա միջավայրի, թվայնացման եւ հասարակությունների ուղղությամբ աջակցության վրա:

ՆՈՐ ԾՐԱԳԻՐ. ԱՇԽԱՏՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՐԵՔ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալությունը պաշտոնապես սկսեց Հայաստանում աշխատուժի զարգացման նոր ծրագիրը:

Ծրագիրը կիրականացվի «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի (ՁԻՀ) եւ այլ գործընկերների կողմից: Ծրագրի արժողությունը 7,5 միլիոն ԱՄՆ դոլար է, սահմանված ժամկետը՝ 5 տարի: Այն նախատեսում է շուրջ 10 000 երիտասարդի՝ պահանջված մասնագիտությունների գործնական հմտություններով զինում՝ ավելի լավ աշխատանքի հնարավորություններ ձեռք բերելու նպատակով:

Առաջիկա 5 տարիների ընթացքում ծրագիրն ուղղված կլինի 15-29 տարեկան երիտասարդներին եւ նրանց կներգրավի կարողությունների զարգացման տարբեր ծրագրերում աշխատանքի վրա հիմնված ուսուցման միջոցով: Ծրագիրը կաջակցի նաեւ հաշմանդամություն ունեցող անձանց՝ արձագանքելով նրանց հատուկ կարիքներին, խրախուսելով նրանց ձգտումները եւ խթանելով մասնագիտական կատարելագործումը, զբաղվածության ոլորտում կարողությունների զարգացումը:

ՆՈՐ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ՀԱՅԱՍՏԱՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Վրաստանից Հայաստան մուտք գործելու կանոնակարգում կրկին փոփոխություններ են արվել: Հայաստանի կառավարության դեկտեմբերի 6-ին հրապարակած որոշման համաձայն, Հայաստանի քաղաքացի չհանդիսացող անձինք սահմանին կրկին կկարողանան թեստ հանձնել:

Ըստ որոշման, եթե օտարերկրյա քաղաքացին չունի պատվաստման վերաբերյալ սերտիֆիկատ, ապա Հայաստան մուտք գործելիս կա'մ պետք է ունենա PCR թեստի բացասական արդյունքով ժամկետի մեջ փաստաթուղթը, կա'մ թեստ հանձնի հենց սահմանին:

Հիշեցնենք՝ ավելի վաղ Հայաստանի կառավարության որոշման համաձայն, Հայաստանի տարածք մուտք գործող օտարերկրյա քաղաքացիների համար հանվել էր թեստ հանձնելու հնարավորությունը եւ, եթե նախկինում Հայաստան մուտք գործելիս PCR թեստը հնարավոր էր սահմանին հանձնել, կամ օդանավակայանում, ըստ ՀՀ կառավարության որոշման, դա կարող էին անել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԴԵԿՏԵՄԲԵՐ

20.12.2021 Ադդեի եւ Մարութա եպիսկոպոսի հիշատակության օր

21.12.2021 Սուրբ Աբգար նախավկայի եւ Քրիստոսին հավատացող մեր անդրանիկ թագավորի հիշատակության օր

23.12.2021 Սուրբ Դավիթ մարգարեի եւ Հակոբոս Տյառնեղբայր առաքյալի հիշատակության օր

25.12.2021 Սուրբ Ստեփանոս Նախավկայի եւ առաջին Մարտիրոսի հիշատակության օր

ԵՂԱՆԱԿ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՍՊԱՍՎՈՒՄ Է ՍՈՎՈՐԱԿԱՆԻՑ ՑՈՒՐՏ ՁՄԵՌ

Վրաստանի շրջակա միջավայրի ազգային գործակալության տարածած տեղեկատվության համաձայն, ձմռանը Վրաստանում կպահպանվի օդի միջին ջերմաստիճանը, օդի ճնշումը կլինի հիմնականում միջին կամ միջինից ցածր:

Մթնոլորտային տեղումները կլինեն հաճախակի երկրի ամբողջ տարածքում, տեղումների քանակը չի գերազանցի կլիմայական նորմայի սահմանները:

Ըստ օդերեւութաբանների, ձմռանը երբեմն գիշերային ժամերին հնարավոր է ջերմաստիճանի կտրուկ նվազում: Արեւմտյան Վրաստանի ցածրադիր գոտիներում -7, -9, լեռներում՝ -13, -14, բարձրադիր գոտիներում՝ -16, -17, Արեւելյան Վրաստանի ցածրադիր գոտիներում՝ -8, -13, լեռներում՝ -14, -18, բարձրադիր գոտիներում՝ -21, -27:

ՍԱՀՄԱՆ

ՍԱԴԱԽԼՈ-ԲԱԳՐԱՏԱՇԵՆ ԵՎ ՆԻՆՈԾՄԻՆԴԱ-ԲԱՎՐԱ ԱՆՑԱԿԵՏԵՐԸ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՇՈՒՐՋՕՐՅԱ

Դեկտեմբերի 15-ից Սադախլո-Բագրատաշեն եւ Նինոծմինդա-Բավրա սահմանային անցակետերը գործում են ամեն օր՝ շուրջօրյա աշխատանքային ռեժիմով:

Ավելի վաղ ընդունված կարգավորումների համաձայն, Հայաստանի քաղաքացիները Վրաստան կարող էին մուտք գործել Բագրատաշեն-Սադախլո եւ Բավրա-Նինոծմինդա սահմանային անցակետերով: Սահմանային անցակետերը գործում էին ամեն օր՝ ժամը 10:00-24:00-ն ընկած ժամանակահատվածում:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ՎԱՌՎԵՑԻՆ ԹԲԻԼԻՍԻԻ ԳԼԽԱՎՈՐ ՏՈՆԱԾԱՌԻ ԼՈՒՅՍԵՐԸ

Դեկտեմբերի 10-ին Թբիլիսիի խորհրդարանի շենքի դիմաց, Ռուսթավելու պողոտայում վառվեցին քաղաքի գլխավոր տոնածառի լույսերը:

Արարողությունն ուղեկցվեց քաղաքապետարանի կազմակերպած համերգով, այսպիսով սկիզբ տրվեց Թբիլիսիի տոնական միջոցառումներին: Միջոցառմանը մասնակցեցին Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն եւ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

Նույն օրը ամանորյա լուսավորմամբ զարդարվեց նաեւ ողջ քաղաքը:

Նշենք, որ դեկտեմբերի 24-ից Թբիլիսիի Օրբելիանու հրապարակում կբացվի «Ամանորյա գյուղը», որը կշարունակի գործել մինչեւ հունվարի 14-ը:

ՍՊՈՐՏ

ԾԱՆՐԱՄԱՐՏ. ԼԱՇԱ ՏԱԼԱԽԱՁԵՆ՝ ՀԵՐԹԱԿԱՆ ՌԵԿՈՐԴՈՎ ԱՇԽԱՐՀԻ ՉԵՄՊԻՈՆ

Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդում եզրագիծը հատեց ծանրամարտի աշխարհի առաջնությունը:

Իր երկրպագուներին կրկին ուրախացրեց աշխարհի եւ Եվրոպայի բազմակի չեմպիոն, Օլիմպիական չեմպիոն, համաշխարհային ռեկորդակիր Լաշա Տալախաձեն: +109 քաշային կարգում նա նորից գերազանցեց իր մրցակիցներին եւ նվաճեց աշխարհի չեմպիոնի կոչումը: Այդ քաշային կարգում արծաթե եւ բրոնզե մեդալները նվաճեցին Հայաստանի հավաքականի ներկայացուցիչներ Վարազդատ Լալայանն ու Գոռ Մինասյանը: Վրաստանի գանձարկղ արծաթե եւ բրոնզե մեդալներ բերեցին Շոթա Միշվելաձեն (61 կգ քաշային կարգ) եւ Ռեւազ Դավիթաձեն (89կգ), իսկ Հայաստանի թիմին բրոնզե մեդալ՝ Սիմոն Մարտիրոսյանը (109կգ քաշային կարգ):

Թիմային հաշվարկում Վրաստանը երեք մեդալով 5-րդն էր, իսկ Հայաստանը՝ երկու մեդալով 16-րդը:

ՇԱԽՄԱՏ. ՄԱԳՆՈՒՍ ԿԱՐԼՍԵՆԸ ՊԱՀՊԱՆԵՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՈՒԺԵՂԱԳՈՒՅՆԻ ԿՈՉՈՒՄԸ

Դուբայում եզրագիծը հատեց շախմատի աշխարհի չեմպիոնի կոչման համար պայքարող աշխարհի չեմպիոն, նորվեգացի Մագնուս Կարլսենի եւ չեմպիոնի հավակնորդ, ռուսաստանցի Յան Նեպոմնյաշչիի միջեւ:

31-ամյա Մագնուս Կարլսենը չորրորդ անգամ պաշտպանեց տիտղոսը՝ առավելության հասնելով 7,5:3,5 հաշվով: 14 դասական պարտիայից անցկացվեց 11-ը: Կարլսենը 4 պարտիայում հաղթեց, 7-ում գրանցվեց ո-ոքի:

Շախմատային թագի համար պայքարում Կարլսենի այս հաղթանակն ամենախոշորն է 1993 թվականից: Այն ժամանակ ռուսաստանցի Գարրի Կասպարովը անգլիացի Նայջել Շորթին հաղթել էր 12,5:7,5 հաշվով: Պրոֆեսիոնալ շախմատային ֆեդերացիայի վարկածով այդ մրցամարտում կարող էր անցկացվել 24 պարտիա, Կասպարովը հաղթանակի հասավ 20 պարտիայի արդյունքում: Կարլսեն-Նեպոմնյաշչիի մրցամարտում նախատեսված էր 14 դասական պարտիա, որից անցկացվեց 11 պարտիա:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Վրաց գրողներ ե'ւ Զափարձեն, ե'ւ Միշվելաձեն: 4.Ֆինլանդիայի մայրաքաղաքը: 9.Երկրաչափական պատկեր: 10.Ստեղծել: 11.Մութը ընկնել, խավարել: 13.Արեւմտահայ գրող Գ.Զոհրապի կեղծանունը՝ Մարսել ...: 14.3,14 թվի տառը: 15.Վրաց երգչուհի Սոխաձեն: 16.Գարնան ամիս: 17.Վրաց անվանի դերասան Ճիաուրելու անունը: 20.Տար..., տոր...: 22.Ռաֆֆու պատմավեպերից: 25.Երկնային մարմին: 26.«... ժայռերդ արծվի բույն» (Ավ.Իսահակյան): 28.Մեղուների խումբը: 29.Նայել, դիտել: 31.Մեքենայի մաս: 34.Թբիլիսյան խանութների ցանց: 37.Ա..., վո...: 38.Գետ Հայաստանում: 40...., տեսա, հաղթեցի: 42....վել, ...ել: 44.Թել շինել: 46.Աչքի պաշտպանիչը: 48.Նոր, նորաթուխ: 49.«..., ..., իմ ճախարակ, ... սպիտակ մալանչներ» (Ղ.Աղայան): 51.Կոմիտասի երգերից՝ «... յար»: 52.«... Աստված, ուժ տուր մեզ» (ժող. երգ): 53.Կար, այժմ ոչինչ ...: 54.Հին զենք: 56.Սեւանի ձկնատեսակներից: 57.Աֆրիկյան պետություն: 58.Խաչիկ Հրաչյանի «Փնթի ...ը» մանկական բանաստեղծությունը:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Թռչունների խումբը: 3.Թբիլիսիում լույս տեսնող մանկա-պատանեկան ամսագիր: 4.Հին հունացի բանաստեղծ: 5.Հայերենի կետադրական նշան: 6.Մահմեդականություն, միաստվածային կրոն: 7.Քաղաք ՌԴ-ում: 8.Ոգեշունչ, ոգեւորություն: 12.Նա դերանունը սեռական հոլովում: 13.Առատ, լիքը: 14.Իսպանացի նկարիչ, քանդակագործ, կերամիստ: 18.Հայկական կարմիր ներկը: 19.Մայրաքաղաք, արքայանիստ քաղաք: 21.Վրաց մեծ կոմպոզիտոր Զ.Փալիաշվիլու օպերաներից՝ «... եւ էթերի»: 23...., լսես, լսի: 24.Հայ անվանի գրող ... Մամյան: 27.Քաղաք Պատմական Հայաստանում: 30.Լծկան անասուն: 32.Տպավորություն ստեղծող, տպավորություն թողնող: 32.Հայոց արքա Խոսրով Երրորդ ...: 35.Ե'վ Թեիլերյանը, ե'ւ Կոմիտասը: 36.Հինգերորդ դարի հայ պատմիչ, պատմահայր: 39.Նար-Դոսի երկերից՝ «Ես եւ ...»: 40.Անտ..., Ել...: 41.Հայ անվանի կոմպոզիտոր Ալ.Սպենդիարյանի օպերաներից: 43.«Նավը լեռան վրա» վեպի հեղինակը՝ ... Զարյան: 45.Հրաչյա Ներսիսյանի մարմնավորած կինոդերերից: 47.Ամերիկացի գրող, պոետ: 50.Հյուսնի գործիք: 55.Մաշտոցյան այբուբենի զինվոր:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Ակնհայտ: 8.Միրեյ: 9.Քվո: 10.Պյոտր: 13.Թվիքս: 18.Ելեք: 19.Ալբանացի: 22.Իննոց: 23.Գվինեթ: 28.Երեխա: 29.Հայնե: 32.Շեր: 33.Կթել: 34.Խռովք: 37.Էլֆ: 39.Պաօկ: 41.Գինձ: 44.Գրազ: 46.Անկե: 47.Փայ: 49.Լիճ: 50.Բազիլիկ: 52.Ձայն: 54.Բինոմ: 55.Բորե: 56.Ոտ: 57.Մորիս: 58.Զուլու:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ինֆո: 2.Վահր: 3.Ոտքի: 4.Ամոթ: 5.Էրբիլ: 6.Հյուսք: 11.Յուլի: 12.Տյան: 14.Վեզիր: 15.Քելեխ: 16.Հաց: 17.Սիգ: 20.Բնույթ: 21.Նոբել: 24.Վերխ: 25.Նեգո: 26.Թափք: 27.Քշել: 30.Ակնա: 31.Ներկ: 35.Ռիգա: 36.Վանկ: 37.Էյր: 38.Ֆիզիկոս: 40.Օտյան: 42.Ինգա: 43.Ջեռնտու: 44.Գրիմո: 45.Ալիբի: 48.Աբիգ: 51.Զոմ: 52.Ձեզ: 53.Յոլ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈՒՅՈՆԱԿԱՆ: ԹԲԻԼԻՍԻ 0105, Գ.ԱԹՈՆԵԼԻՆ ՓՈՂՈ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆ»
ԹԲԻԼԻՍԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445